

Համառօտ Ակնարկս, որ գրուած է քանասէր քարեկամի մը յորդորանօք, քաղուածք մըն է փոքր մէկ մասին ընդարձակ եւ երկարամեայ Ուսումնասիրութեանց, որոնց նիւթը կը կազմեն Հայաստանի արեւմտեան-հիւսիսային սահմանագաւառները, այսինքն՝ յատկապէս Փոքր-Հայք անձուկ եւ ընդարձակագոյն մտօք (արդի Սեբաստիոյ նահանգը), Խաղտիք (Տրապիզոնի նահանգը), Տայք (Ճորոխի աւազանը) եւ Բարձր-Հայոց՝ անոնց սահմանակից մասերը: Երբ յաջողի մեզի լիովին աւարտելու հրատարակութեան տալ պատմական, տեղագրական եւ ազգագրական Ուսումնասիրութիւնքն յիշեալ աշխարհաց, առիթ պիտի ունենանք ներկայացընելու ճոխագոյն փաստեր ու լուսաբանութիւններ նաեւ Հայ-մահմետականութեան ծագման ու տարածման եւ արդի վիճակին մասին: Ակնարկիս մէջ քիչ մ'ընդարձակ